

## ՀԱՆԳԵՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՆԱՐԱՏԻԳ ՄԱՏԵՎՈ

ԵՐԱՎՈՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅԹ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՒԹ

ԱՐԱԿՎԵԼԻ ԱՐԱԿՎԵԼՈՒԹՅՈՒՆ



և իցէ գրուածք մարդ կարդա-  
լու միջոց՝ բնական հետարքիքու-  
թիւն մի կըզգայ Հեղինակին կամ  
գրողին վարք և բարք գիտ-  
ապու. Թէպէտ նոյն խոկ գրուածքը կամ  
Հեղինակութիւնը՝ յայտնի և յաւագոյն  
հայելի են գրողին վարուց և բարուց, զի  
նոյս խելքին չափը և սրտին զգացմունքը  
անդ ապօտած կը տեսնուի, մանաւանդ երբ  
զիրքը բարյական և իմաստասիրուկոն  
նիւթերու վրայ լինի:

Մեր այս Երկրորդ - Կազմանդչեք գիրքը  
կարդացողաց այդ օրինաւոր հետարրիբու-  
թինը լիցնելու մտքով, համառուս կերպով,  
պիտի խօսիմք հոս նախ՝ երկու հին առա-  
կախուններուն վրաց, որք են լիցովառ և  
Փեղրոս, և ապա մեզի մերձաւոր գարերու-  
երկու անուանի առակագիր չեղինակնե-  
րու վրաց, այսինքն Ապոննէնի և Քոյիր-  
ովի - ցուցնելով միանուանցն նոցու միծ  
համարը և գեղեցիկ նպաստակը:

Վարդկան թեան համար օգտակար կը լի-  
նի զեղինակաց վարուց բնթերց մոները, զի  
նսխապէս բարոնելով առակահասաներուն  
մեծ մասածութիւնը, ոյն է անփորձ հասակը  
կրթելն գեղ ՚ի բան և ՚ի բարին, ՚ի շարէն  
և ՚ի մոլութեանց զգացացնելով, համոզ-

մամի իմն մտաղ բնթեռնուն այն դրսէն  
խաղալիք կարծուած զուարձակի տողերը՝  
որոց մէջ ծածկուած կայ գանձ իմաստու-  
թեան, որք ամէն հասակի և կինաց ամէն  
պարտպայից մէջ պիտանի և օգտակա-  
գասեր կրնան լինել:

Ա. Հին տոռկիպիօռք է կզավասո Փափւ-  
գացին, որ յանարէն գրած է, և Փեգրոս  
Թրակացին, որ յատին լեզուավ, յառաջ են  
ժամանակաւ քան զթու ական Փրկչին. ա-  
ռաջինն իրը հարի, իսկ երիորդն 50  
տարիի լորիսըն և գերութեան մէջ մեծ-  
ցոծ, և այն ծանր լուծը՝ որ այժմեան գա-  
րու ազատ մարդկութեան անստանէի կ'ե-  
րեայ, նորա երկար ժամանակ կրած են ի-  
րենց վրայ. ճանշնալով իրենց ազետալիք  
գիրքը և Համբերիլով բազմապատիկ ան-  
իրաւ զրկանաց և արհամարհանաց. մանա-  
ւանդ կզպվառ իւր սցրանգակ տեսքովը,  
և ծանրախօս և կոկաց յիզարին համար.  
ինչպէս նորա առասպելախուռն վարքին  
մէջ կը կարգանք. զոր խնդրուգը կը գըտ-  
նեն կզպվասի առակաց հայ թարգմա-  
նութեան ճակատը:

Ակային պէտք է դիտել որ գերութիւնը չէ կարողացեր նկան առնել կամ բնկան չէ այդ ազատամիտ մարդ կանց, Եզրավասի

և Փեղրոսի՝ ոզին և միտքը. նորա մէկ կողմանէ բողոքելով և միւս կողմանէ արիական համբերութեամի՛ պատերազմած են այն անարդ լուծին դէմ, և հասած են նպատակին՝ թօթափելով զայն իրենց ուսէն: Այլ սրտերնուն մէջ գեռ երկար ժամանակ մնացած է գերո՛թեան դէմ ունեցած ատելութիւննին և մինչեւ ցախման գառ պահած են դէպ առ գերեկից կարեց կից:

Մ'զ այսպէս կ'երեկի որ սորա չկարենալով համարձակ քարոզել ազատութեան վայելչութիւնը բանաւոր մարդու համար, (քանզի և ով էր այն ժամանակինը նոցամորկ ընողը), առակաց կամ այլարամութեանց միջոցով ախրատած են, նախ՝ ցուցընելու անգորթ և բռնաւոր գերեկարաց անարդուր քարքը և վարքը՝ գէս ՚ի ժողովրդեան ընկճալ մասը, այսինքն գերիները. և երկրորդ՝ խրատելով յետիները հեռու փախչիլ բռնաւորներէն, եթէ կարելի է, ապա թէ ոչ խելք և ճարտարութիւն բանեցընել և ուր որ ոյժ չի բաւեր՝ հնարազիտութիւնը ճեռք առնուլ: Այդ պատրուակաւ ժողովրդեան բռնաբար իշխող մասը՝ տախէներու, զայլերու և արջերու մորթու ներքեւ կրներկացացընեն, և անխնայ կը ճագեն և կը խայտառակեն. իսկ հարատահարելոց վրայ, իրեկ գառներու, ազանիներու և այլ անզօր կենդանեաց և բռնոց, կ'արգահատին և կը գործին:

Մեր մոտաց յոյժ համոմձայն կը գտնեմք Փեղրոսի Գ գրոց առ իւլիսիոս գրած նախերգանաց քանի մի տողը...

\* Հակիմ այժմի ասացից առ ինչ հարեալ առասզելք՝ \* Ձի սոցքութիւն հըպատակ չի լին առ կամքն, \* Ցառակո ըզկիր իւր յայսնեաց.

\* Առ ՚ի մըթել կեղենք խառնաց ըզբարուր....

Ակն յայսնի կ'երեկի այս միտքը Եղուլ պոսի առակաց մէջ, նա ամենապարզ ունով, իրեկ եղելութիւնը կը պատմէ իւր առակները. մի միայն նպատակն է ուամկին դիւրահանսկակի իննելը. մատենազրական վայելչութիւնը նորա համար երկրորդական խնդիր է:

Իւր պոտր լիզուովը և սուր մտքով հասած է իւր նպատակին Եղուլպաս. ինչպէս սամիկն նոյնայս և ժամանակին իմաստասէրը, ՚ի թիւս որոց և նորա տէրը, ըստ ու

մանց Աամուացին Բագմոն, կամ ըստ այլոց Քանանթոս փիլիսոփայն, լաւ հասկրնալով նորա առակաց միտքը, մանաւանդ գրողին մեծ ոզին, յականայ կամս կը վերցնեն նորա վրայէն գերութեան լուծը:

Ուստասպէս կովարձատրեն նորա իմաստութիւնը կրիսոս թագաւոր և այլ մեծամեծ իշխաններ, կը ճոխանաց կը հարատանց Եղուլպաս. սակայն ինչպէս վայել է ճամարիս փիլիսոփայի, միշտ անալյացակ կը միայ ինչպէս ծախող բաղդիին հարուածներուն տակ, յընկճեալ իմասկին գերութեան, նոյնպէս ևս ՚ի յաջողութիւն: Արդարակրով մոօր և սուր լիզուով, պէտք եղած միջոցին կը բարձրացընէ իւր ձայնը, պախարակելով գանիրաւութիւնը. որոց ՚ի վարձ Կ'ընդունի զմահ արդարոյ՝ անիրաւ Դերկացոցէ գահավէժ լինելով: Այլ Երկինք վրէժինդիր արդարոյն մահաւան, չարաչար ժամատախտով սատակամահ Կ'ընեն նորա թշնամիքը:

Դիտողութեան արժանի է առակախօսից կենսագրութեան մէջ այս, զի ինչպէս կողովոս նոյն և Փեղրոս, և այլ նոր հեղինակը առակաց, զեռ ևս ՚ի կենդանութեան իմանալի եղած են հասարակաց, և առատ վայելած են իրենց իմաստութեան վարձքը. մինչդեռ այլ շատր ՚ի մատենագրաց, աննշան ելք ունեցած են յաշխարչէ. և շատ ժամանակ անցնելէն վերջ ճանչցուած է նոցայ յարգը:

Բ. Փեղրոս՝ Եղուլպասի նման կ'ազատի ՚ի գերութիւնէ Արդուստոս ինքնակալին ձեռոք, զեռ ևս ՚ի կենդանութեան կը վայելէ, հանգոյն կողովոսի, իւր իմաստութեան վարձքը. կը հասնի ՚ի խոր ձերութիւն. զահավէժ մահուամիր չի մեռնիր. բայց սակայն մէ սակաւ բան զյօն առակիսուը Հալսանաց ենթակայ կը մինի, մինչեւ մահուանէ վերջն անգամ:

Անչուշտ սորա ևս հալածման պատճառը, իւր արդարակրով մտաց հետ, սուր և երգիծանուն գրիչն եղած է. որով համառու, գեղեցիկ և կոկ սոսանաւոր առակաց մէջ պախարակած է հասարակաց պակասութիւնը և մոլութիւնը. զորս անջուշտ ժամանակին անիրաւ մարդկի իրենց վրայ առներլով, կամ այսպէս զրուցենք, իրենց ծածուկ կարծած նենդաւոր բարքը և վարքը բաց և յայսնի կարգալով հեղինա-

կին այլաբանութեանց մէջ, սաստիկ դպրացած են նորա գէմ. 'ի թիւս որոց նշանաւոր թօւի լինել Սէանոս ունի, յորմէ կը խորչի Փեղրոս և չուզեր որ իւր գրուածոց դատաւոր կում ամբաստան լինի.

\* Թէ դատափազ պէ եր ինձ, ու Սէան . . . . .

Խնքը զինքը ամբասիր կ'առնէ Փեղրոս, թէ իւր զիտաւորաւ թենէն դուրս է մէկին միւսին պատույն գալչիլը, այլ հասարակաց համար է զրածը 'ի խրատ. և եթէ որ կակածելով իւր գրայ առնոււ, այն խզէն արատաւոր յինելուն ցոյցն է.

\* Իսկ թէ քիրակ ոք 'ի կասկած անձնա կացքի ասաւ « Որ ինչ ընաւեց առ հասարակ ի խրատ, և Ետաւ « Ընթաց մրտացն անհրատաբ մէրկացի » :

Առակախօսին վախճանն և նպատակն է, կը գրէ նա, մըլութեանց գէմ կոռուիլ և զմարդիկ ժրածան և խիլօր գործիլու յորդորել.

\* Եւ զինչ պէլ առակախօս խընդեցէ.

\* Բայց զուզակթիւն մնորութեանց մահացաւաց.

\* Եւ ըզդաշան ձարտարութիւն հրաշանգելւ:

Այդ վաեմն ապատակը միշտ իւր առաջը ունենալով Փեղրոս՝ աշխատած է միծամէս անոր հասնելու միջոցը և ճանապարհը գտնելու. այն է՝ իւր պարզ և կարճառուս առակաց այնպիս՝ վայելչութիւն և չնորհը, միանգումանց չափով տողերուն այնպիս՝ դաշնակութիւն տոյ, որ առ հասարքի ամեննեցուն ախորժելի ե ընդունելի լինին:

Մինչև ցայսօր լատին լեզուին ընտիր հեղինակաց կարգէն համարուած է Փեղրոս, և նորա առակաց զիրը և կիւրոնի և Վիրդիկիայ հաւասար, օրինակ են կին հոռով մայեցիցի բարբարոյն վահմութեան, Յաջող գելով յայսմ մասին ևս կը գրէ.

\* Ձի կայելու, օրինաւոր են ինձ փառք» . . .

Եւ այլուր.

\* Ըզդշութեան բնձ տենշաք է յայտ տանեւ քը բաւատիս:

Փեղրոս իւր փորիկ առակաց զրբով, միանգումայն երեր նպատակի և վախճանի ծառայուծ և հսած է, առաջին պարաւելը և խայտառակելու, անմիտ և գուոզ մարդկան մնութիւնը, երկրորդ՝ խրատելը և կրթելու զանիորդ հասակը, երրորդ՝ ստանալ ընտիր մատենագրի փառք:

Անշուշտ Փեղրոս մտքէն անգամ անցու-

ցած չէր այն չորրորդ փառքը՝ զոր ստացաւ մահուանէն ԺԸ գար անցնելէն վերջը, թարգմանութեամբ իւր առակաց 'ի բարբառ Հայոց Միհաց ի ձեռն Տեառն եւ գուարդաց արքիափիսկոպոսի, որբ համապատիւ հեղինակին, օրինակիր կրնան լինել պարզ և րնուիր մատենագրութեան և շարուգրութեան մեր և ախնեաց յեզուին: Այլ մեր գտունանք մեղի մերձաւոր առակաբարօս սիր վրայ խօսելու:

\* Դա ու որ պիտի հոչակուէր աշխարհիս մէջ միամիտ մարդ (Եօ հօւսեա) անունով — Յովիչան Լաֆոնիթէն — ծնու 1621ին յուլիսի 4, Գալլիոյ Համբիանց գաւառին, Հաթօ-Թիերի փորիկի քաղաքին մէջ: Հօրը անունը կարուս էր, և նայն տեղ անտառապետի պաշտօն կը վրաբէր:

Փորրիկ Լաֆոնիթէնը՝ տղայ ժամանակին սիրելի կերպ մի ունէր, այլ բարբով բոլորին անհոգ էր: Պնչան կերպով աւարտեց ուսման ընթացքը, չուտով թիւն նըշոյլ մի ապագայ հանձարոյն: Հասա բան տարուան անտարիր յայլոց: նոյն միջոցին կարդալով քանի մի հոգեռոր գրեանք, փափակ ունեցաւ հոգեռորակին կենուց ինքնինքը նուիրելու: մասու գարավանք մի, այլ տարին չըլորած՝ ձգելով գարաց տարազը, զատարիկութեան և նորս ոչ գովելի գրունաց հնակեցաւ: Որպէս զի այն անպատուղ և վասակար կեանքէն հեռացնեն զամատանին, ծնողքը կը կարգեն զնա, և հայրը որդուսին կը յանձնէ իւր պաշտօնը: Եթէ ծրադյալս ոմն լինէր Յովիչաննու կինը, և սկզբան անդ լաւ ազգեցութիւն ունենար տարբառ էրկանը վրայ, անշուշտ նոցա բնտանիկան կե մնը յապագային բոլորին տարբառ էր ձև կանոնը, և մեծ տակախօսը կարուս չէր լինել օտարաց տներուն մէջ խսդաց անկիւն մի վնասելու, ուր գրէ իւր անձնան առակները, և փարիզացի տիկնանց խնամոց ապաւինելու:

Մարիամ՝ Հերիքար, այս էր Յովիչան Լաֆոնիթէնի հնոշ անունը, փոխանակ ֆրաշան տնտեսութեան նորելուկ վէպիկ կարգալով ժամանականու կը լինէր: նոյն միջոցներ Յովիչան, անուամբ միայն անտառապետ, մեծամեծ ծառոց ներփե ժուռ կու գար, և կակիկի արօսներւուն վրայ, կարկաջանոս առակաց հեղիրը անոյշ քուն կը քաշէր: քնէն վերջը այլ երկար միջոց միջաներու,

մըջիւններու և այլ մանրամատնր ճճեաց  
բարքը և արարամունքը զննելով կ'անցընէր։

Բնական կազմով և բնաւորութեամբ  
արտաքին աշխատութեանց միջտ անկա-  
րող, լւա ևս ծոյլ եղած է Լավոնթէն: Այդ  
միջոց ժամանակին, ինչպէս ինքը առանց  
քաշուելու կը զրուցէ, չօրմէն մնացեալ  
փորբիկ գրամագլուխը հանգերծ շահովը  
կ'ուտէ և կը մսխէ: և ժամանակը կ'անցը-  
նէ՝ ծեռոք անցած քանի մի րանտաստեղծնե-  
րու և իմաստասիրաց զրբերը կարդարով,  
՚ի թիւս այլոց Պլատոնի և Պլուտարքոսի,  
Հարիս գալլիի երեսն լեզուով, զի Լավոնթէն  
յանձնառու չէ եղած յունարէն սորվելու,  
այդ իմաստասիրաց բնագիրները կտրդա-  
լու համար:

Պէտք է ենթագրել որ Լավոնիթէն այդ  
ընթերցմանց միջօն միայն կարգապով ան-  
ցած չէ : ինչպէս սավորական մարդիկ կ'առ-  
նեն, այլ կարգացած և սփականած է իրեն  
և մարսած . սակայն ինքը չի փութար իւր  
ընածին հանձարոյն ցոյցիրը տալու . զանա-  
զան առիթներու . մէջ փորբի յանաստեղ-  
ծութիւններ գրելով կը շատանայ :

Երեսուն և երեք տարեկան հասակին՝ կը գրէ մի կատակերգութիւն, որ հեռուէն կու տայ նշաններ իր հանճարոցն. կոկիկ ոճն և ճարտար զարձուածք լիզուին՝ կը գրաւեն միտք գիտնոց արուեստին դպրութեան. Սորոյ հանճարոյն յարդողաց առաջնեն կը լինի Ֆուբք իշխանը, որոյ փոխագործ լավագութէն իշխանիս տարարագութեամբ պաշտօնագուրկ լինելը այնպիսի տողերով երգած է, որք մշտակայ զարդը են փրանի մասենագրութեան և ցոյց մեծ հանճարոյ գրողին և փափուկ զգացմունց սրտին.

Երկար ժամանակ չի կրնար մաս Ապօն  
թէն 'ի Նաթօ-Թիթիրի. զաւակ մի ունենա  
լէն յետոյ կը թողու իւր ծննդեան տեղին  
հանգեթձ կողակցով և զաւակու. 'ի Բա-  
րիզ կամպրոնէ մատցեայ կենաց մեծագոյն  
մասը. Փանի մ'անգամ ետե էն կերթաց  
կինը. 'ի առն գարձնելու ցնորսամիտ Լա-  
ֆոնդէնը, այս զն՝ բ աեզ. Մէծանաւնն Ռո-  
սին կ'աշխատի հաշտեցնելու բաժանեա-  
սմուանիքը, յարձէ ստիպեալ Ապօնթէն  
կը վիրազառնայ 'ի Նաթօ-Թիթիրի. և եր-  
կու օրէն Վ' ըլք դարձեալ 'ի Բարիզ կո-  
գաց. իւր կը հարազնեն սահման-գու

« ՚ի՞նչպէս, հաշտուեցամք կնոջդ հետ » . կը պատասխանէ թէ « Տունը չէր » : — Կը զորմանան այս միամիտ պատասխանին վրայ առականասին կենսագիրք . այլ գործին ընթացքէն այնպէս կ'երևի, որ կանխաւ ինքը Լաֆոնթէն կուշտ մի խնտացելէ՝ տայու պատասխանին վրայ : Տարիներ կ'աղօնի, Լաֆոնթէնի որդին կը մեծնայ . անդամը մի կը հանգիստին իրարու ընկերութեան մէջ, երբ կը Հարցըննեն Քովշաննու թէ « Ի՞նչպէս կը գտնայ այն պատանին » , կը պատասխանէ . — « Եատ չնորհալի կերպ ունի » :

Հաֆոնթենի իրրե տիպար բնութեան  
տրուած է միամիտ ածականը, զի նա ինք-  
զինքը յաճախ ցուցած է իրրե ցնորամիտ  
ոմն և դիւրահաւան, մանաւանդ իրեն ան-  
ախորժ և տաղտկարի ընկերութեանց մէջ.  
որպէս զի այդ արտնութեամբ համարձակ  
կարենայ զբաղիլ մոտք իւր սիրելի կենդա-  
նեաց և միջատից վրայ ։ Արովշետե միւս  
կողմանէ, համարձակ մուտք և ելք ունե-  
ցած է բարիզու իշխանաւորաց աները և  
յաճախ ժամանակ անցուցած է գարուն ա-  
կանաւոր մատենագրաց հետ, հոււնաւ-  
կան է կարծելը որ զուարթ և չէն ընաւո-  
րութիւն և խօսակցութիւն ունեցած է,  
մաքին և ախորժակին յարմար անձանց  
մօտ ունեցած ժամանակ։

Անգամ մը զինքը ճաշի կը հրաւիրեն,  
իշխանաւոր մարդու մը տուն, որպէս զի  
զուարթ խօսակցութեամբ շէնցընէ Հիւրե-  
րը: Լավոնթէն լաւ մի ուտիլ և խմելէն  
վերջը, առանց բերանը բանալու կը մեկոփ  
կերթայ. անշուշտ պատժել ուղելով զիրշ-  
նատէրը, որ զինքը իբրև գրոսեցուցիչ և  
ոչ իբրև պատուաւոր հիւր հրամիած է:

ଭୀରମ୍ଭ କୁଳାଳିତେ ଜୟନ୍ତୀ  
କୁଣ୍ଡ ମାତ୍ରରେ ରନ୍ଧାକୁଥାଦ କୁ ଲାପନମ୍ଭକୁ, କର୍ମକୁ  
ମାତ୍ର ଏହାରେ କୁଳାଳିତେ କୁଣ୍ଡ କୁ ପାଇବାକୁ ମୁଦ୍ରା  
କୁଣ୍ଡରେ ମାତ୍ର ନିର୍ମାଣ କୁଣ୍ଡରେ କୁଣ୍ଡରେ କୁଣ୍ଡରେ  
କୁଣ୍ଡରେ କୁଣ୍ଡରେ କୁଣ୍ଡରେ କୁଣ୍ଡରେ କୁଣ୍ଡରେ କୁଣ୍ଡରେ

փռանկ լեզու չափով թարգմանելով, Նոյն միջոցին ֆեներն մեծ վարդապետին հետ Պուրկոյնի դրսին ժառանգին դաստիարակութեան պարապելով, գրաւած է վարդապետին համակրութիւնը. որ և իրեն վերջի օրերուն մեծ մխիթարութիւնն է թե թիկունք եղած է, կարելի է զրուցել հանճարեղ և անենան Լաֆոնթենի համար թէ  
 « Խաղաղութեամբ անցոց իրեն առանեական. »  
 « Պայծառ տեսօք յաջորդեց ժամաներկոյն ա:

Քանի մի ամիս հիւանդանալով, պատրսպարեալ սրբազն խորհուրդներով, կը փակէ աշքերը Ցովհանն Լաֆոնթէն, ի կրօնական մխիթարութեամբ, 1695ին փիտրուարի 15ին. անմահ անոն թողրով պազայից իւր Առակաց գրբով, ի հասակի 74 ամաց. ճիշդ նոյն հասակին մէջ մեռած է և փերոս լատին առակախօսն.

Յաւալի աշքով նայեցաւ դիակնացեալ բարեկամին ( Լաֆոնթենի ) վրայ մեծն Ռասին, և Ֆեներն ի գամբանականին թարգման հանդիսացաւ զարմանաց ժամանակին գրագէտ մարդկան՝ ի վերայ գեղեցիկ հանճարոյ առակախօսիս թարգմանելով գնենք հոս Ֆեներնի քանի մի խօսքերը, որը առաւել գոհացոցիշ գովեստ ևն Լաֆոնթենի հանճարոյն, քան այլոց երկայն բարակ ճառերը. « Կարդացէք զլա- »

« Փոնթէն և ասացէք. Կարուցացաւ ար- »  
 « գեօք Անսակրէոն առաւել զուարձախօս և « Փայելչարան լինել քան զնա. կամ Ո- »  
 « րտափոս իւր իմաստավիրութեան և բա- »  
 « րոյականին տուամ արգեօք աւելի զա- »  
 « նազանեալ զարդ մոտաց յանկուցիչ. և « կամ Տերենսիոս նկարագրեց արդեօք »  
 « աւելի ճշգրտատիպ և բնական ձեռվ « մարդկան բարբը. Հուսկ ապա Վիրպիիոս « գերազանցեց արգեօք քան զնա ներգաշ- »  
 « նակ և սրտամերձ տովերով. Ոչ բնաւ ». Այսափ նորա հանճարոյ մասին խօսելով, աւելցրնեմք նորա բարուց մասին՝ իր մի հին բարեկամին ( Մօքրուայի ) խօսերը. —

« Իս' յոյշ սիրելի և ամենահաւատարիմ »

« բարեկամն Լաֆոնթէն վախճանեցաւ :

« Ցիսուն տարիէ աւելի է բարեկամացել »

« Էնի՞ միմեանց հետ. շնորհակալ եմ Այ »

« առօծայ որ կարուղացայ այն սեր բարե- »

« կամութիւնը անընդ հատ և առանց ցըր- »

« տանալու պահէն մինչեւ ցիսոր ծերու- »

« թիւն : Կրնամ՝ զրուցել որ միշտ զինքը »

« սիրեցի գողարիկ սիրով, սկրբանէ մին- »  
 « չէ ցվերջ, Աստուած հոգւոյն հանգիստ »  
 « պարգեէ : Նորա հոգին ամենապարզ և « մաքոր էր, որոյ նմանը շեմ տեսած, ան- »  
 « խարդախ ամենակին, Զգիտամ՝ արդեօք »  
 « սուտ խօսք ելած է նորա բերնէն բոլոր »  
 « կենացը մէջ » : Փափագելի է որ Լաֆոն-թենի բարեկամոց իդքը ընդունելի եղած լինին յերկինք. զի սրբոց սրտիւ խոստացուած է տեսութիւն լինածսին :

Թէպէտ և Լաֆոնթենի առակի մի քան զիմ գերազանց ևն բատ արուեստին, ըստ գեղեցիկ ունցն և կենդանի ու ճարտար լի- զուով գրուած լինելով, մանաւանդ պիրա- լի և համապաշտանկարագրութեամբ բու- սոց բարուց այլ և այլ կենդաննեաց, իւրա- բանչիրն զատ և առանձին. զի նա խո- րազնին և մասն գիտողութեամբ ի հան- գէս կը հանէ զնոստ, իրենց բարուով և տարածու և ղրնթեցողը կը մորձեցընէ

« Ըստքանակ թատեր մը քուլ »

« Հարիրաւոր պարաւածով » :

Սակայն գեղեցկագոյն ես կը համարուին հետեւալիքն. կաղինի և իշկեց լվեմ պար- զութեամբ. Երկու Արաւակի Արկանականի փափկութեամբ. կենդամիք լիրանեալը ՚ի ժանառաւակ, որ կենդանի նկարագիր մի է անարդար գամաստանաց մարդկան. Արտօյտի ճագերն և կալրաստանէր, որով ձաղելով կը խրատէ այլոց ձեռով զործ աեանել ուղղողները, և նիմականն դանու- րի, որ ազդու բողոք մի է ընդգեմ պատե- րազմաց և նոցա շարաշար հետեւանաց. Զարցացանին, Որյին և Էջմաներին. որով կը խրատէ յոդողոզ մորով մարդիկը՝ ա- մէն հովէ շարժելու, այլ խելօք և հաստա- տուն գործ տեսնելու. և այլ շատեր :

Դ. Քիւլուա. Լաֆոնթենի ծննդենէն 177 տարի վերջը մած է, նորա հոմանուն Ցով- հան ( Խվան ) Ոլուսաց մեծանուն առակա- խօսը, այն է 1768, փետրուարի 2ին, հե- ռաւոր և ՚ի հիւսիսական յաշխարչի. մէկը միւսէն գրեաթէ մի և կէս գար վերջը, ո- տար աստղերու տակ : Այլ եթէ մէկը լաւ քննէ երկու իմաստասէր առակախօսնե- րուն բարբը և վարբը և ասպա մտաց ար- դիւնքը, ոչ թէ միայն նմանութիւն, այլ բատ զիսաւոր մասանց նոյնութիւն կը գըտ- նայ. սակայն իբրև ստեղծող հանճարներ ունին իրենց առանձնական յատկութիւնք,

և ըստ պարագայից և հանդամանաց՝ զանազանութիւն ևս կենացքարկան մասին։ Սա ևս իւր ազգէն տէ տուշբա մականունը ժառանգած է, որ կը նշանակէ հայրիկ կամ պապուկ, այլ ըստ յարարերական իմաստին միամիտ մակղիրէն շատ չեռու չի մնար։

Պապոյի որդիի է Ցովչան Քոլիով, ծնող Մոսկուայի մէջ, և որովհետեւ նորա հօրը անկարելի եղած է իւր պատշաճովը՝ հաստատ տեղ մի մնալը, այն պատճառաւ իւր փարբիկ որդւոյն և նորա արժանաւոր մօրը հետ ՚ի միասին աստանդուն պատշաճ են 12 տարի. և Թվիս քազարին մէջ մեռնելով այրի թողուցած է զինը Մարիամ, հանգերձ փարբիկ ժառանդով, բոլորովին զուրկ ՚ի ստացւածոց։

Որդեսէրն Մարիամ, իւր միակ զաւակին բարօրութիւնը աշաց առջեւ ունենալով, ամենան աշխատաւթիւն և զրկանք յանձն առած է, ձեռոց վաստակիսվ սնուցանելով որդին, և իւր բոլոր զիտութիւնը նորա սորվեցնելով, անշոշչած միտքը դրած, — ինչպէս ամէն մոյրեր, — որ իւր որդւոյն նման տղայ բոլոր աշխարհիս մէջ չկայ, թէ և Փոխով, հեզ և հանդարտ բարփով, չէ վշտացուցած իւր մայրը, սակայն չէ կրցած ևս փախարինելու այն ծանր զբչողութիւնց, զօրս իրեն համար կրած է նու։ Դեռ չերացած՝ սրտամաշ մեռած է Մարիամ, թողարկ գորդին 20 տարուան հասակի մէջ, իթէ գեռ ես խոսյէր մահր նորա վշտամիեր արեւուն, պիտի վայելը առատապէս կրածներան փոխարէնը, տեսնելով որդւոյն մեծ փառքը և ճսխութիւնը. այլ աւազ, շատ նագամ չեն չնորհչել երկինք արդ վայելք համբերատար և զաւակասէր մարց։

Փոխով Գետարբերգի մէջ որբանալով՝ ՚ի մօրէ, անյարմար մարմիւտու աշխատաւթեանց, ինչպէս իւր Փառանդ տիպարը, ժամանակ մի ընթերցանութեան պարապելով, ապա զրելու ձեռք կը զարնէ. մերթոյս զլատուոր շարժառիթը աղքատութիւնն է, ապրուստի և կելոյ հարկը. մոնք շափարերական զրուածոց ե լրացրաց հաստածոց հետ թատերական գրութեանց ևս կը հետիւ, և կը ճարկէ իրեն շափուոր ապրուածը. այլ ինչպէս Լավինթենի նոյնպէս ևս Քոխովի այդ նախնական զրուածները՝

Կրկրորդական կարգի բաներ են և ոչ արժանաւոր իրեն ապագաց մեծ մնուածն։

Փոխովի յերթասարգութեան ամուսնացնող չի գտնուիր. ապա անյաջող ուր մի սրտարեկ կ'առնէ զնա, որպէս իսպան կը հրածարի այս լուծէն։ Թերեւս իրեն բաղդէն հանդիպել է այն բանը, որպէս զի նման Փռանգաց առակախօսին լընկէց շինի, և հեռաւոր տեղեր, օտար տիկնաց հովանաւորութեամբ ապաստանարան շըփնառէ, իւր գեղեցիկ առանկները զրելու. գույց Լավութենի գրինակն իրեն խրոտ եղած լինի։

Դարայս սկզբան երեք տարբինները Մարզի կալիցին իշխանին մօտ քարտուզարութեան պաշտօնով և ապա նորա որդւոց գաստիարակութեան զբաղած է քոչուելով Վարաթովի մօտ իշխանին կազմաձր, կարելի է համարել Փոխովի հանճարոյ զորգանալու միջոց 1811—1805, նախ մօտաւոր կերպավ ծանօթանալով կենոսց այլ և այլ հանգամանաց և ապա տառանձինն կարդարով ընտիր հեղինակներ լրասպացի լեզուներով։

Թէպէտ և յամբ և գանդաղ կը զարգանաց մեծանուն առակախօսը, այլ հաստատոն զիմանց վրայ. այնպէս որ 1805էն ետի նորա գրուածները փառք կը բերեն անուան հեղինակին և ուսու մատենագրութեան։ Այս միջոցիս կը ծանօթանուց Փոխով Տիմիթրի (Դիմետրեան) հեղինակին հետ. յետինս ընդ այլ և այլ գրուածոց շարադրած է քանի մի ևս առակներ, որքըն գունելի եղած են աղդին։ Ցովչանու մուաց մէջ կ'արթենաց փափաք մի փորձելու իւր հանճարը, և մեծ խնամքով թարգմանելով Լավինթենի երկու առանձները կոպէնի և Եղեգէ և Փենքնիդ ձարսնացուն կը ներկացացընէ Տիմիթրիի. սու խկոյն ճանչնալով Փոխովի յարմարութիւնը յայսմ մասին մատենագրութեան, խրախուսիչ կը լինի։ Հեղինակին խոսքերէն քաջալիքուելով Փոխով, իւր զրելը կը նուիրէ զպրութեան այս ճիզվն, մեծ խնամքով իմաստափական և բարյական խրառուց իմաստները առակաց զերասան-կենցան և բուտոց թերանց զնելով, այլ ամէն տողի, բասի և վանկի մասնաւոր հոգ առանձնով, արհեստը, վայելու չը ներդաշնակը և գեղեցիկ ՚ի մի կը ձաւլէ. այնպէս որ նու-

րա առակները զատ զատ մի ամրողաւթիւն կը կազմեն. ոչ մին թերի մնացած չէ փերը յիշած կատարելու թիւներէն. այս ամենայնի վերայ ազգին յեզուն, բարբը և բնաւորութիւնը. նոյն և իրենց բարոյական պէտքը ամենափած առակաց մի փոքր քրիք մէջ կ'ընծայէ ազգին. Գրագէտք խսկրից մեծ համակրութիւն կը ցուցընեն առ հեղինակն, ինչպէս կոմնն Սթրոկոնվ և Յլենին. Կայսրն Ալեքսանդր Պաւլովիչ, նորա փոքր գիրքը երեք մի մեծ ճառայութիւն ազգին և ոռուս գրականութեան համարելով, առատապէս կը վորձարք ըզգողը. Կայսրուհին Մարիամ Թէկոդորեան ստէպ ստէպ հրաւիրելով իւր մօտ զբուրով, և նորանոր գրած առակները կարգացընելով գիմացը, սիրով մտիկ կ'ընէ և կը խրախուսէ:

Ինչպէս Լաֆոնթէն, նոյնպէս և առ մեծ յարգութիւն ունեցած է առ իւր յարգը ճանչողները. և սրովհետու Գոկոլով վերջին տարիները շատ յաճախած է Օլենին իշխանին առունը, զրուցած է անգամ մի առ տանափինը. — «Երբ հասնի իմ վերջին «ժամա» կու գամշհու, ձեր ոտքերուն ներքի «մեռնելու»: Եւ յերաւի, ժամանակ անցնելին յետոյ, երբ կ'իջնայ կաթուածը և կը խանգարէ հեղինակին ներացեալ՝ այլ առողջ կազմը, հիւանդագին և մեծաւ զժուարութեամբ՝ կ'ենէ կ'երթայ առ Եղիսարէթ Օլենին իշխանակին, և սրտամամիկ խօսքերով կը զրուցէ. — «Ասել էի արդէն «որ պիսի գամշ ձեր ոտքի ներքի մեռնելու. նացեցէր վրաս»: այլ իշխանութւոյն խնամօք գործեալ կը կազզուրի Գոկոլով:

Ծուռաց Գետրուրգի ակագեմիայն, 1815ին, կը վարձատրէ Գոկոլովի աշխատութիւնը սակի միտալով, չնորչելով ևս մի նոյնափիսի միտալ Գրարամինի, ազգային և նուանի պատմագրին: Գոկոլով կ'ապրի 76 տարի, և մեծ համբաւ թողլով ազգին մէջ, կը կնքէ իւր մահացուն: Նորա առակաց գիրքը մինչեւ ցարդ մեծի և փորդի սիրելի ընթերցարան մի է, առողջ բարոյականը զուարձալի և ընտիր տաշացափութեամբ գրուած: Աւելորդ է զրուցելը, որ մեծահանգ էս կը լինի նարա թագումը:

Զկայ հեղինակ մի, որոյ վրայ այս կամ այն կրիտիկոսը լիզու սրտծ շլնի, յայնմ իսկ է ընտիր հեղինակին յարգը՝ որ յաղ-

թող հանդիսանայ ընդդէմ սուս կրիտիկափիյն: սակայն Գոկոլով այն հեղինակաց կարգէն է, որոյ համար ով որ բերան բանաց կամ գրիք ձեռք առնու, անշուշու գովասանութեան համոր պէտք է լինի: Ամեծածայն գովասան Գոկոլովի իւր առակաց գիրքն է. որոյ հայերէն աշխարհաբառ թարգմանութիւնը Գարրիկէ Այլվաղեան եպիկոպոսի բազմահմուտ հայ թարգմանչին զործ է:

Թէպէտ Գոկոլով առաջնորդ առած է իրեն Փռանդ առակախօսը, այլչէ շատացած միայն նորո առակները թարգմանելով, շատեր յինքենէ հանձարած է, և բատ պատշաճին և տեղւոյն ազգին պակասութիւնը ուզգելու համար ձայնը բարձրացուցած է, և բատ գրելով Գոկոլյ ոռու մատենսովըին, — «Նորա առակաց գրքին մէջ ազգին առ մենայն կարգի մարդկանց համար կամ կարեոր զասիր կան, մկնեալ ՚ի բարձր «աստիճան պաշտօնէից» մինչև յցետին և մշակը»:

Լաֆոնթէնէ թարգմանած առակները, ինչպէս կայեին և լիդէն, Մահ կ'ինդանեաց, Երկու Աղասիիք, և այլն, գաղափարին հաւատար գեղջկութիւն ունին, միայն այն տարբերութեամբ որ առաջին գրողն եղած է ճարտարախօսն Լաֆոնթէն, իսկ երկրորդը՝ Վայելչարան և Հիւսիսութեան Գոկոլով. որով որչափ սուսնոյն գրուածը իւր աղդին բարուց համեմատ՝ տեսնեան են զեցեցիութեամբ, նոյնպէս ևս երկրորդինը՝ ուստ ազգին համոր ընտիր և վայելուչ են:

Այլ և այլ գեպքերով զրած ինչնահանեար առակաց մէջ յոյժ խորագէտ է Գոկոլով: Արտաշարժ և գողորիկ է Ծաղիկ-Քաջասաց առակը, որ ՚ի պատիւ կայսրուհոյն Մարիամու թէսոգորեան զրած է, հիւանդութեան միջոց տարած խնամքին փոխադրձ: Էյ և Աստիկը զրած է առ քէն վրիժու ընդդէմ իւր առակաց անդպիր կրիտիկոսին: Քառամայի հուազօք կը խրատէ ժամանակին մեծ պաշտօնավար անձինքը, ցուցընելով որ պաշտօնափոխութիւն կամ տեղափոխութիւն անօգուտ են, եթէ չունենան պաշտօնավարք՝ աշխարհք կառափարելու իսկէք: Անհաստուածք, ազգուրուցքը մի է ընդդէմ ժամանակին անկրօնից, այսպէս և այլ շատերը:

Գիտելու արժանի է այս՝ որ ինչպէս Լա-

գոնթէն, նոյն և Փռիլով՝ նման հին առակախօսից Եզովկորսի և Փեղրոսի՝ ձադել և խոյտառակել են ուռ հասարակ մարդկութեան մողութիւնքն և պահասութիւնքը. այլ վերջին հեղինակներու շեն գրգռած իրենց դէմ ստահակ մարդկանց մոլցինութիւնը. որպէս կրենք՝ զերծ ՚ի չար արկածից, փառօք և պատուվ չուել են յաստեաց:

Եթէ այս բանին պատճառ մէջ կողմանէն նոր հեղինակաց զգուշաւորութիւնը առնուիք, և ՚ի մեծամեծաց ընդունած մեծ յարգանքը, որոց շեն համարձակած մոլենախանձ մարդիկի զինավասովի նոցա դէմ. միւս կողմանէն անհրաժեշտ է համորելը, ՚ի պատիւ մեզի ժամանակակից մարդկութեան, զի բարք և կիրք աւելի կիրք և շափառեալ են այժմ, որպէս և արդինաւորած հին առակախօսից ջանքը: Այլ մեր շմուանամբ յիշելու աստանօր, հանգերծ մեծառ պատկառանօք, Երկնաւոր Վարդապետին բազմազն առակօք խրամակը զմարդկութիւն. որով բիրու և անոպայ բարք կրթուելով, այժմ ամէն շիտակ խօսողը գահավէծ շեն գլորել:

Եւ Հայերէն թարգմաննելով վերցիշեալ հեղինակաց գեղեցիկ առակներէն ումանք, և յայլոց ևս քաղելով, մեք երկու զլատառը նպատակ ունիմիք. առաջինը՝ աշխարհին վրայ խելօթ վարուելու բարոյական սկզբունքը առաւորել մանուկ հասակի, հայ փափուկ սրտերու մէջ. երկրորդ՝ մեր աշխարհաբար խակ լեզուն սիրելի ընծայել նոցա: Այս երկու նպատակէն վերջ երրորդի ևս ծառայելով, կաղանչչէք առակաց երկու պարակաց ևս վերջնը, իբրև երրորդ մասն և օրինակ աւելցուցած եմք պարզ գրաբառ առակներ. որպէս զի աշխարհաբարն մէջ քաջավարժ աշակերտը մեր զրոց գեղեցիկ լեզուին ևս ճաշակը առնուն: Քանզի բոլորովին անհամաձայն եմք անոնց, որք մեր գրաբառը մեսեալ լեզու կը համարին, և այնոր ուսուզութիւնք՝ անպէս ժամանակառութիւն: Համացուած եմք, որ առանց գրաբառի աշխարհիկ լիզոն չէ կարելի տուումափրել. և թէ մեր նախնեաց վաեմ լեզուն միշտ ուսումնասիրելու առարկայ պէաք է ինի հայ գրագիտաց համար, քանի որ հայ եկեղեցին այլ հնչեն այն լեզունք գրուած փառաւոր

ժամանացութիւնը և մեծավայելուչ շարականը:

Զ. Կարելի է ոմանց մոտաց մէջ խնդիր մի յուղի, թէ ինչո՞ւ արդիօր արդէն հայերէն թարգմանուած և ապաւած առակներէն ումանք՝ այս գրոց մէջ ես տեղիք աւնեցած են այլ թարգմանութիւններ կամ նոր ձեռւլ: Այդ խնդրոյ անհրաժեշտ է մեզ տալ պատասխան, մի այնու՝ զի մի հանգոյն ձային Փեղրոսի՝ յայլոց կողովատեալ փետրովք գորդասիրել թուիմք. և երկրորդ՝ յուցընիլու համար թէ օրինաւոր վախճանաւ եղած են այն թարգմանութիւնը և ոչ անվախճան խորհրդով: Նախ և առաջ այլոց ու իցէ գրուած առակ կամ նոււագ, արձակ կոմմ շափեալ առնոււլ և այլում անոււամբ հրատարակելը, յայտնի գործութիւն և գործ մեղադրանաց կը համարիմք. այդ պատճառի խորշած եմք յայլոց թարգմաննեալ առակը այս երկու ևս կապտանիք Երակաց մէջ մոցնելու, շատանալով Բաղմակիպին մէջ երբեք երբեք հրատարակել և գեռ ես անտիպ մեր հաւաքած առակները ՚ի մի ամփոփիլու: Եթէ երբեք ուրիք հանգիսին այս առակաց մէջ, ազգային այլ ընտիր հեղինակաց բացատրութիւնը, գարծուածք և տողք անգամ, մեր այն ոչ յափշտակութիւն կը համարիմք, այլ գեղեցիկին և յաւագունին հետեւ զլութիւն, ընծայելով փառքը միշտ առաջին հանճարովին: Մեզ յոյժ ախորդելի պիտի լինի, եթէ ու իցէ բաց բացատրութիւն կոմմ տող ներկայ առակներէս, մուտ գանէ յայլում գրուածք:

Երկրորդ՝ այնպէս կը համարիմք որ օտարազգի հեղինակաց որ գրուածքն որ լինի, ազատ է ամէն որ երկրորդ և երրորդ անգամ թարգմաննելու, եթէ ունի այդ գործոց ախորդակ կոմմ առանձին նպատակ մի: Որպէս ետք առակաց առաջին գիրքը կոմմ պրակէլ եղաւ ընդունելի աղդիս, այն պատճառու այս երկրորդ գրքին մէջ, ընտիր առակաց առաջանակնեալ ամբողջութիւն մի տալու զիտմանը, արգէն յայլոց թարգմանուած առակներէն գեղեցիկները վերսախ թարգմաննելով և լեզուին և բացատրութեանց միակերպ ան մի տալով, աւելցուցինք այս պրակիս մէջ. խարշելով ըստ կարեւոյն ոչ միայն յօտարազգի բաներէ, այլ և բացատրութիւններէ և դար-

ձուածքներէ . որով համարձակիմք զրուցելու որ այս զրիխ մէջ ամփոփուածը ինչպէս հայ բառերավ , նոյնաէս ևս հայ բառցարտոթեամբ գրուած էն , և ոչ սարկարար մուրացածոյ յօտարաց զորդուածովք կաղմնալ :

Մեզագրութեան , կարծեմ , արժանիք կը լինէմք , եթէ յօտարաց հոնճարուած ընտիր առակինիր , այս զրիխ ՚ի գորս մերժէինք , մի անգամ թարգմանուած էն զրուցելով :

Այս ևս կը յաւելում որ յայլոց թարգմանուած կամ զրուած առակինիրը , մանաւանդ ընտիր գրչաց , և ոչ միով մասամբ նուաստ կը համարիմք . զի մեր մատենա-

գրութիւնը յայսմ մասին վաելչական է և ծագկած , որոյ ձգիչ զօրութիւնը պատճառ եղած է մեզ , այս պրակներո հաւաքելու : Պատշաճաւոր է ֆեզրոսի Դ զրոց երկու տողը մէջ ըներկու , որք յաւզեալ ինդրոյա յարմարաւոր պատասխանի կրնան համարուիլ .

« Քանզի ուրոյն իւրաքանչիւր ումք խօսիւրդ են ՚ի ընէ « Եւ ինքնուրոյն նըկարելոյ զայն երանդ » :

Եթէ այս փարբիկ զրիոյին ևս նախընթացին բազզին հանդիպելով ընդունելի լինի ազգին , երրորդ և վերջին պրակն ևս հաւաքելու յօտարութեամբ կ'աշխատիմք . « Եւթէ Տէր կամեսցի » :

### Հ. Գ.Կ Ո.Թ Ա.Ղ Ա.Ռ Ա.Կ Փ

## Ծ Ա.Ղ Կ Ո.Թ Ա.Ղ Ա.Ռ Ա.Կ Փ

### Ա.Ր Տ Ո Յ Տ , Զ Ա.Գ Ե Ր Ն Ե Ւ Գ Ի Ւ Ղ Ա Վ Ե Տ Ը

Դուն քու ձեռքէդ ինչ որ կու գայ  
Աշխատելով ՚ի զրուուած տար .  
Դուռ զրացուէ օգնութիւն շահ  
Ուզած ատենրոյ չես զըսնար:  
Տաճիկ առակն կը զրուցէ .  
« Այլոց ձեռքով ոչ բրանէ » :

Այսուտիկներն միշտ կը շինեն  
իրենց բոյներ , ամառ ատեն ,  
կանանց ցորենի  
Դաշտերուն միիր :  
Հանձն ձռ կ'ածհն ,  
Հան կը թշխանն :  
Այլ դորեներն դեռ նոր գեղնած ,  
Թթային ձագերն թեաւորած :  
Մի թշխամանըր Արտաստիկ  
Մինչև շինեց իւր բունիկ ,  
Տարսուկ գարունն առաջ զընաց .  
Երբ լոյս տեսան նորա ձագեր ,  
Ցորեն արտէն հասունցած էր :  
Արգ՝ որպէս զի շըլլայ յանկարուծ ,  
Ցորեն հնձնոյ մշակներուն :  
Մասադ լինին մանգալներուն ,  
Մարիկ Արտայս ամէն առտու ,  
Երբոր կ'երթար հունաւ ժողվելու ,

Պատուէր կու տար ձագուկներուն  
Որ՝ միշտ կենան պատրաստ՝ արթուն .  
Թէ՛ Գեղագետն , թէ՛ իւր որդին  
Հոնձքի մասի ինչ որ խօսին  
Պատմեն տեղովը ՚ի գարծին :  
Այսպէս , օր մի , ժամեւ տասին ,  
— Մարիկ Արտայսը բունը չէր .  
ի գաշտ իշաւ ցորենին տէր .  
Որդւոյն ասաց . « Այս ցորեններ  
« Բնյորովն են հասունցեր .  
« Պէտք է յատով հընձելու :  
« Ուստի այս օր զննա գու .  
« Բարեկամոց իմացու ,  
« Որ գան ամէնք մնջ առտու  
« Իրենց մանգալով  
« Գերանդիներով :  
« Օր մի առաջ ժողվենք երթայ ,  
« Բայսանելու ատեն շըկայ » :  
Իրիկուան դէմ գարձաւ մորիկ .  
Չառերն վեր վար ճիմիկ ճիմիկ ,  
Մէկը կ'ասէ , — « Վազը պի՛ գան  
« Կանուխ , կանոխ առաւստեն » :  
Միւսն այն զիւն — « Կորանք , Մարիկ ,  
« Պիտի արին մեր տուն բռնիկ » .  
Երրորդ մի թէ — « Մէկը , մնցք , ինչու